

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ճապոնիայի Կառավարությունը, ձգտելով ամրապնդել երկու երկրների միջեւ գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները տեխնիկական համագործակցության միջոցով եւ նկատի ունենալով, որ տնտեսական եւ սոցիալական զարգացման խթանումը փոխադարձ շահ է ներկայացնում իրենց երկրների համար, համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Երկու Կառավարությունները կաշխատեն խթանել տեխնիկական համագործակցությանը երկու երկրների միջեւ:

ՀՈՂՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող տեխնիկական համագործակցության ծրագրերի առանձին դրույթներ կհամաձայնեցվեն երկու Կառավարությունների իրավասու մարմինների միջեւ: Ճապոնիայի Կառավարության իրավասու մարմինն է Ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունը եւ Հայաստանի Հանրապետության Կառավարության իրավասու մարմինն է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

ՀՈՂՎԱԾ 3

Տեխնիկական համագործակցության հետեւյալ ձեւերը կիրականացվեն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (այսուհետ՝ JICA) միջոցներով՝ Ճապոնիայում գործող օրենքներին եւ նորմերին, ինչպես նաեւ 2-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.

ա) Հայաստանի Հանրապետության մասնագետներին տեխնիկական ուսուցման ապահովում,

բ) փորձագետների՝ (այսուհետ՝ փորձագետներ) ուղարկում Հայաստանի Հանրապետություն,

գ) տեխնիկական ունակությունների լայն հնարավորություններով ու հարուստ փորձով ճապոնացի կամավորների ուղարկում Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ ավագ կամավորներ),

դ) Ճապոնիայի ներկայացուցչությունների ուղարկում Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ ներկայացուցչություններ)՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական եւ սոցիալական զարգացման ծրագրերի վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու նպատակով,

ե) Հայաստանի Հանրապետության Կառավարությանը սարքավորումների, մեքենաների եւ նյութերի տրամադրում,

զ) երկու Կառավարությունների միջեւ նախօրոք կայացած համաձայնության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը տեխնիկական համագործակցության այլ ձեւերով ապահովում:

ՀՈՂՎԱԾ 4

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը կերաշխավորի, որ հայ մասնագետների կողմից ձեռք բերված տեխնիկական ունակությունները եւ գիտելիքները, ինչպես նաեւ 3-րդ հոդվածում նշված՝ ճապոնական տեխնիկական համագործակցության

արդյունքում տրամադրված սարքավորումները, մեքենաները եւ նյութերը կաջակցեն Հայաստանի Հանրապետության տնտեսական եւ սոցիալական զարգացմանը եւ չեն օգտագործվի ռազմական նպատակներով:

ՀՈՂԱԾ 5

Երբ JICA-ն փորձագետներ, ավագ կամավորներ կամ ներկայացուցչություններ ուղարկի, Հայաստանի Կառավարությունը.

1. 1) ա/ Կազատի փորձագետներին, ավագ կամավորներին կամ ներկայացուցչությունների անդամներին հարկերից, ներառյալ եկամտահարկը ու պետական գանձումները, որոնք կարող են առաջանալ արտասահմանից ստացվող աշխատավարձի եւ ցանկացած այլ գումարի ստացման դեպքում.

բ/ Կազատի փորձագետներին, ավագ կամավորներին կամ ներկայացուցչությունների անդամներին հյուպատոսական գանձումներից, հարկերից, ներառյալ մաքսային տուրքերը եւ պետական գանձումները, ինչպես նաեւ տարադրամի ներմուծման չափի թույլտվության եւ վկայականի ձեռք բերման համար պահանջներից, եթե ներմուծվում են՝

I) ուղեբեռ,

II) անձնական օգտագործման, կենցաղային անհրաժեշտության եւ լայն սպառման ապրանքներ,

III) մեկ ավտոմեքենա՝ յուրաքանչյուր փորձագետին, փորձագետներից յուրաքանչյուրի ընտանիքին, յուրաքանչյուր ավագ կամավորին եւ ավագ կամավորներից յուրաքանչյուրի ընտանիքին, ովքեր պետք է ապրեն Հայաստանի Հանրապետությունում.

գ/ Կազատի փորձագետին, ավագ կամավորին եւ նրանց ընտանիքներին, ովքեր ավտոմեքենա չեն ներմուծում Հայաստանի Հանրապետություն, հարկերից, ներառյալ ավելացած արժեքի հարկը, եւ պետական գանձումներից այն դեպքում, եթե փորձագետներից յուրաքանչյուրը, նրանց ընտանիքները, ավագ կամավորից յուրաքանչյուրը, նրա ընտանիքից յուրաքանչյուրը տեղում ձեռք է բերել մեկ ավտոմեքենա.

դ/ Կազատի փորձագետներին, ավագ կամավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին "բ" կետի III ենթակետում եւ "գ" կետում նշված ավտոմեքենաների գրանցման ծախսերից.

2) ա/ Սեփական միջոցներով կապահովի հարմարավետ գրասենյակ եւ այլ հարմարություններ, ներառյալ հեռախոսը եւ ֆաքսային ծառայությունները, որոնք անհրաժեշտ են փորձագետի, ավագ կամավորի եւ ներկայացուցչությունների պարտավորությունների իրականացման, ինչպես նաեւ աշխատանքի եւ ապրուստի համար.

բ/ Սեփական միջոցներով կտրամադրի տեղական աշխատակազմ (ներառյալ համապատասխան թարգմանիչները, եթե անհրաժեշտ է), ինչպես նաեւ փորձագետներին, ավագ կամավորներին եւ ներկայացուցչություններին՝ հայ գործընկերներ՝ իրենց պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից ելնելով.

գ/ Կհոգա փորձագետների եւ ավագ կամավորների հետեւյալ ծախսերը, եթե Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ կապված մարմինների տեղական պայմանները եւ ֆինանսական հնարավորությունները թույլ տան.

I) օրական ճանապարհածախսը՝ դեպի աշխատանքի վայր եւ հակառակը,

II) Հայաստանի Հանրապետության ներսում նրանց ճանապարհածախսը, եւ

III) նրանց պաշտոնական գրագրությունը.

դ/ Կապահովի փորձագետների, ավագ կամավորների եւ նրանց ընտանիքների անդամների համար կենցաղային անհրաժեշտության ապրանքների ձեռք բերում, եւ

ե/ Կապահովի պայմաններ փորձագետների, ավագ կամավորների, ներկայացուցչությունների եւ նրանց ընտանիքների անդամների համար բժշկական խնամք եւ հարմարություններ ստանալու համար.

3) ա/ Թույլ կտա փորձագետներին, ավագ կամավորներին, ներկայացուցչությունների եւ նրանց ընտանիքների անդամներին մուտք գործել, մեկնել եւ ժամանակավոր բնակվել Հայաստանի Հանրապետությունում իրենց նշանակման ընթացքում, նրանց կտրամադրի հարմարավետություն՝ օտարերկրացիների գրանցման պահանջների գործընթացն անցնելու համար, եւ նրանց կազատի հյուպատոսական

գանձումներից.

բ/ Փորձագետներին, ավագ կամավորներին եւ ներկայացուցչությունների անդամներին իրենց պարտականությունների իրականացման նպատակով կտրամադրի անձը

հաստատող քարտեր՝ կառավարական բոլոր գործակալությունների աջակցությունն ապահովելու համար.

գ/ Փորձագետների, ավագ կամավորների եւ նրանց ընտանիքների անդամների համար կապահովի հարմարավետություն՝ վարորդական իրավունք ձեռք բերելու նպատակով, եւ

դ/ Կիրականացնի այլ միջոցառումներ փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների պարտականությունների իրականացման համար:

2. 1-ին ենթակետում նշված ավտոմեքենաները ենթակա կլինեն հարկերի, ներառյալ՝ մաքսային տուրքերի վճարման, եթե դրանք ավելի ուշ վաճառվեն կամ փոխանակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում այն անձանց, ովքեր չեն օգտվում

հարկերից ազատման իրավունքից եւ նման այլ արտոնություններից:

3. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը փորձագետներին, ավագ կամավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին կշնորհի այն արտոնությունները, ազատություններն ու առավելությունները, որոնք տրամադրվում են ցանկացած երրորդ երկրի կամ որեւէ միջազգային կազմակերպության փորձագետներին, ավագ կամավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին, ովքեր համանման առաքելություն են իրականացնում Հայաստանի Հանրապետությունում:

ՅՈՒՐԱԾ 6

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը կկրի բոլոր պահանջները, որոնք կծագեն փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների դեմ, որոնք այս կամ այն կերպով կապված կլինեն նրանց պարտավորությունների իրականացման հետ՝ բացառությամբ, երբ երկու Կառավարությունները համաձայնության կգան, որ նման պահանջները փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների կողմից դրսևորված անուշադրության կամ դիտավորյալ պայմանավորված վատ վարքագծի արդյունք են:

ՅՈՒՐԱԾ 7

1. 1) Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարությանը սարքավորումների, մեքենաների եւ նյութերի տրամադրման դեպքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը այդ սարքավորումները, մեքենաները եւ նյութերը կազատի հյուպատոսական գանձումներից, հարկերից, ներառյալ մաքսային տուրքերը եւ պետական գանձումները, ինչպես նաեւ, ներմուծման դեպքում, ներմուծման թույլտվության եւ օտարերկրյա փոխանակումների համար անհրաժեշտ վկայականի ձեռք բերման պահանջներից: Վերոհիշյալ սարքավորումները, մեքենաները եւ նյութերը կդառնան Հայաստանի Հանրապետության Կառավարության սեփականությունը Հայաստանի Հանրապետության Կառավարության իրավասու մարմիններին պատկանող բեռնաթափման կետ հասնելուն պես:

2) Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարությանը սարքավորումների, մեքենաների եւ նյութերի տրամադրման դեպքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը այդ սարքավորումների, մեքենաների եւ նյութերի տեղական ձեռք բերման դեպքում դրանք կազատի հարկերից, ներառյալ՝ ավելացած արժեքի հարկից եւ պետական գանձումներից:

3) 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված սարքավորումները, մեքենաները եւ նյութերը կօգտագործվեն այն նպատակներով, որոնք ճշգրտվել են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթներում կամ այլապես նախօրոք համաձայնեցվել են երկու Կառավարությունների իրավասու մարմինների միջև:

4) 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված սարքավորումների, մեքենաների եւ

Նյութերի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության տարածքում, դրանց տեղափոխման, պահպանման եւ վերանորոգման հետ կապված ծախսերը կհոգա Հայաստանի Հանրապետության

Կառավարությունը:

2. 1) Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից պատրաստված սարքավորումները, մեքենաները եւ նյութերը, որոնք անհրաժեշտ են փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների պարտականությունների իրականացման համար, կհամարվեն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) սեփականությունը, եթե չկա այլ համաձայնություն երկու Կառավարությունների իրավասու մարմինների միջեւ:

2) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը փորձագետներին, ավագ կամավորներին եւ ներկայացուցչությունների անդամներին կազատի հյուպատոսական գանձումներից, հարկերից, ներառյալ՝ մաքսային տուրքերից եւ պետական գանձումներից, ինչպես նաեւ, առաջին ենթակետում նշած սարքավորումների, մեքենաների եւ նյութերի ներմուծման դեպքում, ներմուծման թույլտվության եւ օտարերկրյա փոխանակումների համար անհրաժեշտ վկայականը ձեռք բերելու պահանջներից:

3) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների կողմից Հայաստանի Հանրապետությունում՝ առաջին ենթակետում նշված սարքավորումների, մեքենաների եւ նյութերի ձեռք բերման դեպքում կազատի դրանք հարկերից, ներառյալ՝ ավելացած արժեքի հարկից եւ պետական գանձումներից:

ՀՈԴՎԱԾ 8

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հատուկ մարմինների միջոցով սերտ կապեր կպահպանի փորձագետների, ավագ կամավորների եւ ներկայացուցչությունների անդամների հետ:

ՀՈԴՎԱԾ 9

1. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից Հայաստանի Հանրապետությունում արտասահմանյան գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ) բացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը թույլ կտա Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությանը (JICA) Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) արտասահմանյան գրասենյակ պահել Հայաստանի Հանրապետությունում եւ կընդունի ռեզիդենտ ներկայացուցիչ եւ Ճապոնիայից ուղարկվող նրա անձնակազմը (այսուհետ, համապատասխանաբար, ներկայացուցիչ կամ անձնակազմ), որը կիրականացնի Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից իրենց վրա դրված պարտավորությունները, որոնք նույնական են սույն Համաձայնագրի տեխնիկական համագործակցության ծրագրերին:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը.

1) ա/ Ներկայացուցչին, անձնակազմին եւ նրանց ընտանիքներին կազատի հարկերից, ներառյալ՝ եկամտահարկից կամ պետական գանձումներից, արտասահմանից աշխատավարձ եւ այլ եկամուտներ ստանալու դեպքում.

բ/ Ներկայացուցչին, անձնակազմին եւ նրանց ընտանիքների անդամներին կազատի հյուպատոսական ծախսերից, ներառյալ՝ մաքսային տուրքերից եւ պետական գանձումներից, ինչպես նաեւ ներմուծման թույլտվության եւ օտարերկրյա փոխանակումների համար անհրաժեշտ վկայական ձեռք բերելու պահանջներից՝ հետեւյալ ապրանքների ներմուծման դեպքում՝

I) ուղեբեռ,

II) անձնական օգտագործման իրեր, կենցաղային եւ լայն սպառման ապրանքներ, եւ

III) մեկ մեքենա՝ յուրաքանչյուր ներկայացուցչին, անձնակազմին,

Ներկայացուցչի ընտանիքին, որոնք նշանակված են Հայաստանի Հանրապետությունում մնալու:

գ/ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ներկայացուցչի, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամներին, ովքեր մեքենա չեն ներմուծում Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում մեքենաներ ձեռք բերելու դեպքում դրանք կազատի հարկերից, ներառյալ՝ ավելացած արժեքի հարկից եւ պետական գանձումներից:

դ/ Կազատի ներկայացուցչին, անձնակազմին եւ նրանց ընտանիքների անդամներին "բ" կետի III ենթակետի եւ "գ" կետում նշված գրանցումների ծախսերից:

ե/ Թույլ կտա ներկայացուցչին, անձնակազմին եւ նրանց ընտանիքների անդամներին մուտք գործել, մեկնել եւ ժամանակավոր բնակվել Հայաստանի Հանրապետությունում իրենց նշանակված ընթացքում, կապահովի հարմարավետություն օտարերկրացիների գրանցման պահանջների գործընթացն անցնելու համար եւ նրանց կազատի հյուպատոսական գանձումներից:

զ/ Ներկայացուցչին եւ անձնակազմին կտրամադրի անձը հաստատող քարտեր եւ հատուկ անցագրեր օդանավակայանի (նավահանգստի) անձնագրային անցակետն անցնելու

համար՝ փորձագետներին, ավագ կամավորներին եւ ներկայացուցչությունների անդամներին դիմավորելու եւ ճանապարհելու նպատակով:

է/ Ներկայացուցչի, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների համար կապահովի հարմարավետություն՝ վարորդական իրավունք ձեռք բերելու նպատակով:

ը/ Կիրականացնի այլ անհրաժեշտ միջոցառումներ ներկայացուցիչների եւ անձնակազմի պարտականությունների իրականացման համար:

3. 2-րդ կետում նշված ավտոմեքենաները ենթակա կլինեն հարկային, ներառյալ՝ մաքսային տուրքերի վճարման, եթե դրանք փոխադրվեն կամ վաճառվեն Հայաստանի Հանրապետության տարածքում այն անձանց կամ կազմակերպությունների, որոնք չեն ազատվում համանման հարկերից եւ օժտված չեն նույն արտոնություններով:

4. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ներկայացուցչի, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների վրա կտարածի այն բոլոր արտոնությունները, ազատությունները եւ առավելությունները, որոնք տարածվում են Հայաստանի Հանրապետությունում գործող ցանկացած երրորդ երկրի կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների վրա:

ՀՈՂՎԱԾ 10

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը միջոցներ կձեռնարկի Հայաստանում գտնվելու ընթացքում փորձագետների, ավագ կամավորների, ներկայացուցչությունների անդամների, ներկայացուցիչների, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անվտանգությունն ապահովելու համար:

ՀՈՂՎԱԾ 11

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ճապոնիայի Կառավարությունը կխորհրդակցեն սույն Համաձայնագրի շուրջ առաջացած ցանկացած հարցի վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ 12

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագրի դրույթները կկիրառվեն նաեւ տեխնիկական համագործակցության այնպիսի յուրահատուկ նախագծերի նկատմամբ, որոնք սկսվել են Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ, ինչպես նաեւ՝ փորձագետների, ավագ կամավորների, ներկայացուցչությունների անդամների, ներկայացուցիչների, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների, վերոհիշյալ ծրագրի հետ կապված սարքավորումների, մեքենաների եւ նյութերի նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրի դադարեցումը չի անդրադառնա տեխնիկական համագործակցության հատուկ ծրագրերի վրա, որոնք կիրականացվեն մինչև ծրագրի ավարտը. հակառակ դեպքում նախօրոք փոխադարձ համաձայնեցում կլինի երկու Կառավարությունների միջև. Համաձայնագրի դադարեցումը չի անդրադառնա նաեւ փորձագետների, ավագ կամավորների, ներկայացուցչությունների անդամների, ներկայացուցչի, անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների առավելությունների, ազատությունների եւ արտոնությունների վրա՝ վերոհիշյալ ծրագրերի իրականացման ընթացքում իրենց պարտականությունների կատարման հետ կապված:

ՀՈԴՎԱԾ 13

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ներքին ընթացակարգի ավարտի վերաբերյալ գրավոր ծանուցումը ճապոնիայի Կառավարության կողմից ստանալուց հետո:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մեկ տարվա ընթացքում եւ ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն տարի՝ հաջորդ տարվա համար, մինչև Կառավարություններից մեկը մյուս Կառավարությանը ամենաքիչը վեց ամիս առաջ նախօրոք գրավոր զգուշացում ուղարկի Համաձայնագիրը դադարեցնելու մտադրության մասին:

Ի վկայություն վերոհիշյալի՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Տոկիո քաղաքում, 2005 թվականի հունիսի 8-ին, անգլերեն, երկու օրինակով:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. հունիսի 8-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 15

AGREEMENT

On technical cooperation between the Government of the Republic of Armenia and the Government of Japan

The Government of the Republic of Armenia and the Government of Japan,
Desiring to strengthen further the friendly relations existing between the two countries by the promotion of technical cooperation, and
Considering mutual benefits derived from promoting the economic and social development of their respective countries,

Have agreed as follows:

Article I

The two Governments shall endeavor to promote technical cooperation between the two countries.

Article II

Separate arrangements which govern specific technical cooperation programs carried out under this Agreement shall be agreed upon between the competent authorities of the two Governments. The competent authority of the Government of Japan is the Ministry of Foreign Affairs, and the competent authority of the Government of the Republic of Armenia is the Ministry of Foreign Affairs.

Article III

The following forms of technical cooperation will be carried out by the Japan International Cooperation Agency (hereinafter referred to as "JICA") at its own expense in accordance with the laws and regulations in force in Japan as well as with the arrangements referred to in Article II:

- (a) providing technical training to Armenia nationals;
- (b) dispatching experts (hereinafter referred to as the "Experts") to the Republic of Armenia;
- (c) dispatching Japanese volunteers with a wide range of technical skills and abundant experience (hereinafter referred to as the "Senior Volunteers") to the Republic of Armenia;
- (d) dispatching Japanese missions (hereinafter referred to as the "Missions") to the Republic of Armenia to conduct surveys of economic and social development projects of the Republic of Armenia;
- (e) providing the Government of the Republic of Armenia with equipment, machinery and materials; and
- (f) providing the Government of the Republic of Armenia with other forms of technical cooperation as may be decided upon by mutual consent between the two Governments.

Article IV

The Government of the Republic of Armenia shall ensure that the techniques and knowledge acquired by Armenia nationals as well as the equipment, machinery and materials provided as a result of the Japanese technical cooperation as set forth in Article III contribute to the economic and social development of the Republic of Armenia, and are not utilized for military purposes.

Article V

In case JICA dispatches the Experts, the Senior Volunteers and the Missions, the Government of the Republic of Armenia shall:

1. (1) (a) exempt the Experts, the Senior Volunteers and members of the Missions from taxes including income tax, and fiscal charges imposed on or in connection with salaries and any allowances remitted to them from abroad;
- (b) exempt the Experts, the Senior Volunteers, members of the Missions and their families from consular fees, taxes including customs duties and fiscal charges, as well as from the requirements of obtaining import license and certificate of foreign exchange coverage, in respect of the importation of:
 - (i) luggage;
 - (ii) personal effects, household effects and consumer goods; and
 - (iii) one motor vehicle per Expert, per family of the Expert, per Senior Volunteer and per family of the Senior Volunteer assigned to stay in the Republic of Armenia;
- (c) exempt the Experts, the Senior Volunteers and their families who do not import any motor vehicle into the Republic of Armenia from taxes including value added tax and fiscal charges in respect of the local purchase of one motor vehicle per Expert, per family of the Expert, per Senior Volunteer and per family of the Senior Volunteer; and
- (d) exempt the Experts, the Senior Volunteers and their families from

the registration fee of the motor vehicles mentioned in (b)(iii) and ..

(2) (a) provide at its own expense suitable office and other facilities including telephone and facsimile services necessary for the performance of the duties of the Experts, the Senior Volunteers and the Missions as well as to bear the expenses for their operation and maintenance;

(b) provide at its own expense the local staff (including adequate interpreters, if necessary) as well as Armenia counterparts to the Experts, the Senior Volunteers and the Missions necessary for the performance of their duties;

(c) bear expenses of the Experts and the Senior Volunteers, whenever local conditions and financial possibilities of authorities concerned of the Government of the Republic of Armenia may permit, for:

(i) daily transportation to and from their place of work;

(ii) their official travels within the Republic of Armenia; and

(iii) their official correspondence;

(d) provide the convenience for acquisition of appropriate housing accommodation for the Experts, the Senior Volunteers and their families; and

(e) provide the convenience for receiving medical care and facilities for the Experts, the Senior Volunteers, members of the Missions and their families.

(3) (a) permit the Experts, the Senior Volunteers, members of the Missions and their families to enter, leave and sojourn in the Republic of Armenia for the duration of their assignment therein, offer them the convenience for procedures of alien registration requirements, and exempt them from consular fees;

(b) issue identification cards to the Experts, the Senior Volunteers and members of the Missions to secure the cooperation of all governmental organizations necessary for the performance of their duties;

(c) offer the Experts, the Senior Volunteers and their families the convenience for acquisition of car driving license; and

(d) carry out other measures necessary for the performance of the duties of the Experts, the Senior Volunteers and the Missions.

2. The motor vehicles mentioned in paragraph 1. shall be subject to payment of taxes including customs duties if they are subsequently sold or transferred within the Republic of Armenia to individuals or organizations not entitled to exemption from such taxes or similar privileges.

3. The Government of the Republic of Armenia shall accord the Experts, the Senior Volunteers, members of the Missions and their families such privileges, exemptions and benefits as are no less favorable than those accorded to experts, senior volunteers, members of missions and their families of any third country or of any international organization performing a similar mission in the Republic of Armenia.

Article VI

The Government of the Republic of Armenia shall bear claims, if any arises, against the Experts, the Senior Volunteers and members of the Missions resulting from, occurring in the course of, or otherwise connected with, the performance of their duties, except when the two Governments agree that such claims arise from gross negligence or willful misconduct on the part of the Experts, the Senior Volunteers or members of the Missions.

Article VII

1. (1) In case JICA provides the Government of the Republic of Armenia with equipment, machinery and materials, the Government of the Republic of Armenia shall exempt such equipment, machinery and materials from consular fees, taxes including customs duties and fiscal charges, as well as from the requirements of obtaining import license and certificate of foreign exchange coverage, in respect of the importation. The equipment, machinery and materials mentioned above shall become the property of the Government of the Republic of Armenia upon being delivered c.i.f. at the port of the disembarkation to competent authorities of the Government of the Republic of Armenia.

(2) In case JICA provides the Government of the Republic of Armenia with equipment, machinery and materials, the Government of the Republic of Armenia shall exempt such equipment, machinery and materials from taxes including value added tax and fiscal charges in respect of the local purchase.

(3) The equipment, machinery and materials mentioned in sub-paragraphs (1) and (2) shall be utilized for the purpose specified in the arrangements referred to in Article II unless otherwise agreed upon between the competent authorities of the two Governments.

(4) The expenses for the transportation within the Republic of Armenia of the equipment, machinery and materials mentioned in sub-paragraphs (1) and (2) and the expenses for their replacement, maintenance and repair shall be borne by the Government of the Republic of Armenia.

2. (1) The equipment, machinery and materials, prepared by JICA, necessary for the performance of the duties of the Experts, the Senior Volunteers and members of the Missions shall remain the property of JICA unless otherwise agreed upon between the competent authorities of the two Governments.

(2) The Government of the Republic of Armenia shall exempt the Experts, the Senior Volunteers and members of the Missions from consular fees, taxes including customs duties and fiscal charges, as well as from the requirements of obtaining import license and certificate of foreign exchange coverage, in respect of the importation of the equipment, machinery and materials mentioned in sub-paragraph (1).

(3) The Government of the Republic of Armenia shall exempt the Experts, the Senior Volunteers and members of the Missions from taxes including value added tax and fiscal charges in respect of the local purchase of the equipment, machinery and materials mentioned in sub-paragraph (1).

Article VIII

The Government of the Republic of Armenia shall maintain close contact, through organizations designated by it, with the Experts, the Senior Volunteers and members of the Missions.

Article IX

1. The Government of the Republic of Armenia shall admit JICA to open and maintain an overseas office in the Republic of Armenia (hereinafter referred to as the "Office") and shall accept a resident representative and his/her staff to be dispatched from Japan (hereinafter referred to as the "Representative" and the "Staff" respectively) who perform the duties to be assigned to them by JICA relative to the technical cooperation programs

under this Agreement in the Republic of Armenia.

2. The Government of the Republic of Armenia shall:

(1) (a) exempt the Representative, the Staff and their families from taxes including income tax and fiscal charges imposed on or in connection with salaries and any allowances remitted to them from abroad;

(b) exempt the Representative, the Staff and their families from consular fees, taxes including customs duties and fiscal charges, as well as from the requirements of obtaining import license and certificate of foreign exchange coverage, in respect of the importation of:

(i) luggage;

(ii) personal effects, household effects and consumer goods; and

(iii) one motor vehicle per Representative, per Staff, per family of the Representative and per that of the Staff assigned to stay in the Republic of Armenia;

(c) exempt the Representative, the Staff and their families who do not import any motor vehicle into the Republic of Armenia from taxes including value added tax and fiscal charges in respect of the local purchase of one motor vehicle per Representative, per Staff, per family of the Representative and per that of the Staff;

(d) exempt the Representative, the Staff and their families from the registration fee of the motor vehicles mentioned in (b) (iii) and .;

(e) permit the Representative, the Staff and their families to enter, leave and sojourn in the Republic of Armenia for the duration of their assignment therein, offer them the convenience for procedures of alien registration requirements, and exempt them from consular fees;

(f) issue identification cards and special passes to the Representative and the Staff to enter airport/seaport beyond passport control point to receive and send off the Experts, the Senior Volunteers and members of the Missions;

(g) offer the Representative, the Staff and their families the convenience for acquisition of car driving license; and

(h) carry out other measures necessary for the performance of the duties of the Representative and the Staff.

(2) (a) exempt the Office from consular fees, taxes including customs duties and fiscal charges, as well as from the requirements of obtaining import license and certificate of foreign exchange coverage, in respect of the importation of the equipment, machinery, motor vehicles and materials necessary for activities of the Office;

(b) exempt the Office from taxes including value added tax and fiscal charges in respect of the local purchase of the equipment, machinery, motor vehicles and materials necessary for the functions of the Office; and

(c) exempt the Office from taxes including income tax and fiscal charges imposed on or in connection with office expenses remitted from abroad.

3. The motor vehicles mentioned in paragraph 2 shall be subject to payment of taxes including customs duties if they are subsequently sold or transferred within the Republic of Armenia to individuals or organizations not entitled to exemption from such taxes or similar privileges.

4. The Government of the Republic of Armenia shall accord the Representative, the Staff and their families as well as the Office such privileges, exemptions and benefits as are no less favorable than those accorded to representatives, staff and their families as well as offices of any third country or of any international organization performing a similar mission in the Republic of Armenia.

Article X

The Government of the Republic of Armenia shall take necessary measures to ensure security of the Experts, the Senior Volunteers, members of the Missions, the Representative, the Staff and their families staying in the Republic of Armenia.

Article XI

The Government of Japan and the Government of the Republic of Armenia shall consult with each other in respect of any matter that may arise from or in connection with this Agreement.

Article XII

1. The provisions of this Agreement shall also apply, after the entering into force of this Agreement, to the specific technical cooperation programs which have commenced prior to the entering into force of this Agreement, and to the Experts, the Senior Volunteers, members of the Missions, the Representative, the Staff and their families staying in the Republic of Armenia as well as to the equipment, machinery and materials related to the said programs.

2. The termination of this Agreement shall neither affect the specific technical cooperation programs being carried out until the date of the completion of the said programs, unless otherwise decided upon by mutual consent between the two Governments, nor affect the privileges, exemptions and benefits accorded to the Experts, the Senior Volunteers, members of the Missions, the Representative, the Staff and their families staying in the Republic of Armenia for the performance of their duties in connection with the said programs.

Article XIII

1. This Agreement shall enter into force on the date of receipt by the Government of Japan of the written notification from the Government of the Republic of Armenia of the completion of necessary domestic procedures for the entry into force of this Agreement.

2. This Agreement shall remain in force for a period of one year, and shall be automatically renewed every year for another period of one year each, unless either Government has given to the other Government at least six months written advance notice of its intention to terminate the Agreement.

In witness whereof the undersigned, duly authorized thereto, have signed this Agreement.

Done in duplicate in English at Tokyo on June 8, 2005.

The Agreement has entered into force on 08.06.2006.

